

բնի լեզուով, բայց մեր քաղաքի հայ հասարակութեան խոշոր մասը հայ աւետարանականները կազմելով, սրանք ընդդէմ են թատրոնին և չեն կամենում պահպանել այդ ազգային ձեռնարկութիւնը, ասելով որ թատրոնը մեղք է: Միթէ մեր բողոքականները չը գիտեն որ թատրոնը ազգային դպրոց է, որտեղ կարելի է մի կողմից ծանօթանալ ազգային պատմութեան հետ, իսկ միւս կողմից ժամանակակից այլ և այլ հասարակական խնդիրներին հետ: Կարելի է միթէ այն աստիճան մոլեռանդ լինել, որ թատրոնը անբարոյականութիւն համարել: Ամեն բան իր ժամանակն ունի, կայ ժամանակ աղօթելու, կայ ժամանակ սովորելու, կայ ժամանակ հասարակական կեանքով ապրելու, վերջապէս կայ ժամանակ և ազնիւ գոհարձութիւնները վայելելու: Զարմանալի է որ մեր հայ աւետարանականները, որոնք ամեն բանի մէջ ուզում են նմանիկ դերմանացիներին, մինչև անգամ լինում են նրանց մէջ իրանց գերմանացի անուանողները, չեն կամենում հասկանալ որ նոյն իսկ իրանց սիրած Գերմանիայում, որին նրանք չեն էլ ճանաչում, և որին նրանք երազում են չեն տեսել, կեանքը ամենաբարձրագոյն է և այդ պատճառով առաջդէմ բողոքական գերմանացին չէ խորշում ոչ թատրոնից, ոչ ուրիշ հասարակական ազնիւ և ուսանելի գոհարձութիւններից: Թատրոնական գործը Գերմանիայում, աւետարանական Գերմանիայում, ամենածագկած գրութեան մէջ է: Ամեն բան իր ժամանակն ունի, գերմանացին ամեն բանին համակրում, օժանդակում է, որ իր մայրենի լեզուի դարձադարձ, իր հայրենիքի ծաղիկման է նպաստում: Թող չը մոռանան մեր հայ աւետարանականները, որ իր ժամանակին կարելի է աղօթք անել Աստուծոն, բայց պէտք է իր ժամանակին և հասարակական կեանքով ապրել իր հայրենակիցների հետ: Ազգային դպրոց, մայրենի լեզու, ազգային թատրոն, հասարակական կեանք, ազգային ընկերութիւններ ու ճանդեսներ չեն վնասում աստուածապաշտութեանը: Բողոքական գերմանացին իր հայրենիքի հասարակական հարուստ կեանքը, իր մայրենի գերմանական լեզուն ու մայրենի գեղարուեստը իր համար պարծանք է համարում: Ինչի բողոքական հայը իր մայրենի հայոց լեզուն, իր հայրենի հասարակական կեանքը, իր ազգային դրօշը ու գեղարուեստը չը պէտք է աշխատի ծաղկեցնել, որպէս զի նա էլ ժամանակով իրաւունք

ունենայ նրանցով պարծնելու: Կեանքը անշարժութիւն չէ, այլ անընդհատ շարժում, կատարելագործութիւն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Խշտան Բիւմարի պէտք է վերջապէս համոզվի, որում է „Provin. Corresp.“, որ նրա դաշնակցութիւնը կղերականների, պահպանողականների և առհասարակ ազատամիտ ձգտումների թշնամի տարրերի հետ փոքրացնում է նրա հեղինակութիւնը իրրե պետական մարդու և արդելում է կայսերութեան դրծերի կանոնաւոր ընթացքին: Նրա նոր բարեկամ կղերականների պահանջները հետզհետէ սաստկանում են, իսկ նրա ֆինանսական և տնտեսական նախագիծերը, որոնց պատճառով նա բարեկամացաւ իր նախկին թշնամիների հետ, հարկաւոր պաշտպանութիւնը չեն գտնում պարլամենտի մէջ: Երեւելի պետական մարդը, Գերմանիայի միութեան գաղափարի իրագործողը, նպատակ դնելով ընդդիմադրել հասարակութեան ամենալուսաւորված մասի ձգտումներին, զրանով ինքը դատապարտեց իր քաղաքականութիւնը անպառօք լինելու և իւրաքանչիւր քայլափոխին անաջողութեան է հանդիպում:

Կառավարչական լրագիրներից ամենանշանաւոր „Provinzial Correspondenz“ լրագրի վերջին յօդուածը գանդուում է, որ պարլամենտը ընդդիմադրում է կառավարութեան նախագիծը հարկային վերանորոգութեանը: Երեւում է, որ պարլամենտական մասնաժողովի անուշադրութիւնը ծխախոտի մենավաճառութեան օրինագծի վերաբերութեամբ ստատիկ տկարացրեց իշխան Բիւմարին, եթէ նրա ամենանշանաւոր լրագիրներից մէկը գանդատվում է, որ կենտրո-

նական կուսակցութիւնը և մինչև անգամ ազգային ազատամիտները այնպէս չը վերաբերվեցին օրինագծին, ինչպէս կառավարութիւնը յոյս ուներ: „Provin. Corresp.“ լրագիրը անկարող է հասկանալ, թէ ինչպէս կարող էր մասնաժողովը այդպիսի դժուար և բաղադրեալ խնդրի մասին երեք նիստերի ընթացքում եզրակացութիւն կայացնել և դրանով էլ մեկնում է այդ եզրակացութիւնների բացասական բնուորութիւնը: Կիսապաշտօնական լրագրի կարծիքով, մասնաժողովը մանրամասնաբար պէտք է քննել կառավարչական օրինադրելու և, եթէ նա համաձայն չէր օրինագծի հետ, պէտք է ապացուցներ ներկայացնել, թէ ինչի մէջն են նրա պահանջութիւնները և թէ ինչի համար Գերմանիայի մէջ անկարելի է գործադրել մի տեսակ հարկ, որ ուրիշ երկրներում աջողութիւն է գտել: Մինչդեռ պարլամենտական մասնաժողովը ոչ թէ միայն հարկաւոր չը համարեց մանրամասնաբար քննել օրինադրելու և մեթոց նրա յօդուածները առաջինից մինչև վերջինը, այլ և բողոքեց ծխախոտի վրա հարկ դնելու դէմ, որ, յիշեալ լրագրի կարծիքով, մասնաժողովի գործը չէր:

Ընդդիմադրական ազատամիտ կուսակցութիւնը բոլորովին ուրիշ կերպ է մոտճում: Մասնաժողովը պէտք չունէր մանրամասնաբար քննել ծխախոտի մենավաճառութեան օրինադրելու, քանի որ նա օրինագծի դէմ էր սկզբունքով, քանի որ նա գիտէր, որ մենավաճառութեան դէմ է ոչ թէ միայն պարլամենտի, այլ և ազգաբնակչութեան մեծամասնութիւնը: Այնքան է, որ կառավարութիւնը առաջ պէտք է լաւ ծանօթանար պարլամենտի տրամադրութեան հետ և չառաջարկէր մի օրինագիծ, որի ընդունելը անկարելի էր, մինչդեռ կառավարութիւնը յոյս էր դրել մինչև անգամ ընդդիմադրականների պաշտպանութեան վրա: Չը նայե-

լով որ ազգային ազատամիտ կուսակցութիւնը անգաղաք զիջումներ է անում, բայց նա էլ այնքան անգամ խաբւած էր պետական կանցլերից, որ ձեռքից չը թողնեց յարմար միջոց վրէժխնդիր լինելու համար: Խշտան Բիւմարի անկասկած կարծում է, որ նա իբրեւ մեծ մարդ պէտք չունի ուշադրութիւն դարձնել հասարակական կարծիքի վրա, այլ որ ընդհակառակը հասարակական կարծիքը պէտք է հնազանդվի նրա ցանկութիւններին և գաղափարներին: Կա իսկապէս շատ հասկանալի մոլորութիւն է, որի մէջ ընկնում են այն մարդիկ, որոնք իրանց տաղանդի շնորհիւ կամ բողոքի բերմամբ բարձր դիրք են ստացել: Բայց կեանքը անգաղաք ապացուցանում է, որ միայն այն գործն է ամուր, որ յենվում է հասարակական գիտակցութեան վրա, որ միայն այն գործն է պողաբեր, որ համակրութիւն է գտնում հասարակութեան կենդանի և գործունէ այժմերի կողմից:

Բերլինի թղթակիցը հաղորդում „Գոլթսթին“ որ պարլամենտական շրջաններում լուր է տարածված, իբր թէ պետական կանցլերը մտադիր է կառավարութեանը մասնակից անել չափաւոր ազատամիտ տարրեր և այդպիսով իր կողմը դարձնել պարլամենտական մեծամասնութիւնը: Թէ թղթակիցը և թէ լրագիրը կասկածում են, որ այդ լուրը հիմնաւոր լինի: Խշտան Բիւմարի բռնաւոր բնուորութեան մէջ արմատացած ատելութիւնը դէպի ազատամիտութիւն այնքան մեծ է, որ նա երբեք չի դիմի ազատամիտների օգնութեանը: Մի և նոյն ժամանակ ազգային ազատամիտ կուսակցութեան հետ հաշտութիւնը, որ թուով այժմ քաջացած է, երբեք չի տայ իշխան Բիւմարի ցանկացած մեծամասնութիւնը, այլ ընդհակառակը նրան կորցնել կը տայ մի քանի դաշնակիցներ, որոնք յայտնի դէպքերում նրան պիտանի են: Գերմանական ազատամիտ կուսակցութիւնը առ-

կազարեանի հետ: Թէ Օրին և թէ Լազարեանը մի և նոյն հայրենիքից են, այսինքն՝ Սպահանից դադրած հնդկաստանցիներ:

Սպահանի և Հնդկաստանի հայերը թէև պատմական հանգամանքների պատճառով տարազգայնացան իրանց հայրենիքից, բայց իրանց սրտերը թողնեցին Հայաստանի աւերակներին մէջ: Նրանք արեւելքի հեռուոր խորքերում բախտ և հարստութիւն գտան, բայց Գաղտն գետի ափերից միշտ խորին կարօտով իշխում էին հայկական աշխարհը, որպէս տարազգայնացած Իսրայէլը Տիգրիսի ափերից իշխում էր իր սուրբ Երուսաղէմը:

Նրանք չէին խնայում իրանց հարստութիւնը, եթէ կարելի լինէր առանց արիւնի ոսկով գնել հայրենիքի փրկութիւնը: Եկատրինէ II կայսրուհու դահակալութիւնից երկու տարի առաջ (1760) Անգլիայից Ս. Պետերբուրգից եկաւ հայապալի Էմին Յովսէփեանը, որը ընդի Պարսկաստանի Համադան քաղաքիցն էր, իսկ Հնդկաստանում միլիոններ էր վաստակել: Նա առաջարկեց իր բոլոր հարստութիւնով օգնել ռուսներին, եթէ կընդունէին իրանց զօրքերով մասնակցել հայերի հետ, Հայաստանը պարսից լծից ազատելու գործում: Նրա առաջարկութիւնը համակրութեամբ ընդունվեցաւ: Էմինը Ս. Պետերբուրգից եկաւ Հայաստան, Գարաբաղի մէջները մեծ ոգևորութեամբ ընդունեցին նրան: Իրանը պատերազմելու համար սիրա և զօրեղ բաղրակներ ունէին, իսկ Էմինը փող էր տալիս զինքեր գնելու համար: Ուրեմն ամեն ինչ պատրաստ էր: Վրաց և հայոց մէջ մի գորեղ դաշնակցութիւն կապելու համար, Էմինը դիմեց և Քարթլիի իշխան Զեթախի, յայտնեց նրան իր միտքը: Բայց այդ երկրներսանի իշխանը, որը այդ ժամանակ մի կողմից պարսիկների փէշիցն էր բռնած, իսկ միւս կողմից աչքերը դարձրած ունէր դէպի Ս. Պետերբուրգ, անհամակրութեամբ վերաբերվեցաւ դէպի Էմինի առաջարկութիւնը: Հայոց կրիստոս դնաց այնուհետեւ կալկաթ քաղաքական առանձին խորհուրդներով: Բայց վաղա՛հաս մահը թողնեց նրա նպատակները անկատար: Նրա միլիոնները անտէր մնալով

անգլիական բանկում, այնպէս էլ կորան...

Յովսէփ արք-եպիսկոպոսը այն աստիճան ոգևորված էր Հայաստանի փրկութեան գաղափարով, որ նա իր հայրենիքի վերականգնման հարցը կայսրուհու ողորմածութեամբ արդէն իրականացած էր համարում: Վերանորոգված Հայաստանը պիտի գտնվէր Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ, որպէս առանձին աւստական իշխանութիւն: Յովսէփ արք-եպիսկոպոսին մինչև անգամ առաջարկվեցաւ կազմել դաշնակցութեան ծրագիրը, թէ որպիսի յարաբերութիւններ պիտի ունենար հայոց ազգը իրան հովանաւորող պետութեան հետ: Այդ դաշնագիրը, որպէս յետոյ կը տեսնենք, բաղկացած էր 19 յօդուածներից և բովանդակում էր իր մէջ զլիսաւոր հիմունքները, թէ որպիսի կազմակերպութիւն պիտի ստանար վերանորոգված Հայաստանը և ինչ պարտաւորութիւններ պիտի յանձն առնէր նա ռուսաց պետութեան վերաբերութեամբ:

Յիշեալ դաշնագիրը գրվեցաւ 1790 թվին, մի և նոյն ժամանակ Յովսէփ արք-եպիսկոպոսը կազմեց մի ընդարձակ տեղեկագիր, որի մէջ մանրամասնաբար նկարագրեց Գարաբաղի մէջները ունեցած յարաբերութիւնները ռուսաց արքունիքի հետ, սկսեալ Պետրոս մեծի օրերից մինչև իր ժամանակը, և ինչեցից նրանց մատուցած մեծ ծառայութիւնները Ռուսաստանին: Այդ տեղեկագիրը վերոյիշեալ դաշնագրի հետ արք-եպիսկոպոսը ներկայացրեց կայսրուհուն գնահատ ֆերդինանդ իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչ Պետեմկինի միջնորդութեամբ:

Պետեմկինը Յովսէփ արք-եպիսկոպոսի լաւ բարեկամ և մտերիմն էր: Ինչպէս երեւում է շատ պատմական փաստերից, նա արդէն իրան կալական նոր իշխանութեան ամբողջ կանգիդատ էր համարում:

Ընդհանուր հայերի ոգևորութեանը չափ չը կար աշխարհի ամեն ծաղրեում սիրոված հայերը արդէն դիտել, թէ չուտով Հայաստանը կը վերականգնէ: Յովսէփ արք-եպիսկոպոսը, այդ եռանդով, անխնջ եկեղեցականը, շարունակ թղթակցութիւն-

ներ ուներ ամեն երկրների հետ, ուր որ հայեր կային: Սկսեալ Հնդկաստանից մինչև Լեհաստան, սկսեալ Նիդրլանդից մինչև Պարսկաստան նա տարածում էր իր թղթերը և ամեն տեղ բորբոքում էր հայրենասիրութիւնը: Նա թղթակցութիւն ուներ Վրաստանի իշխաններին, Էջմիածնի կաթողիկոսի, Աղուանից կաթողիկոսի և Գարաբաղի մէջները ինչի հետ:

Ոգևորութեանը այնքան մեծ էր, և Հայաստանի ազատութեան գործը այնքան իրականացած էր համարվում, որ Հնդկաստանում Յովսէփ Դաշնամիրանի հեղինակութեամբ տպագրեցին մի գիրք, որ բովանդակում էր իր մէջ հայոց և վրաց միացեալ թագաւորութիւնների վարչական և դատաստանական օրէնքները:

Հնդկաստանի դրամատերները չէին խնայում իրանց փողերը հեռուոր Հայաստանի ազատութեան գործին ծառայեցնելու համար: Այդ միջոցներում յայտնվեցաւ մի այլ հնդկաստանցի հայրենասէր, որ ցանկանում էր Հայաստանի ազատութիւնը գնել Պարսկաստանից և Թուրքիայից ոսկով: Նա արդէն գնել էր վրաց Գիօրի իշխանից Լոռու գաւառը և դիտաւորութիւն ուներ դրանում: Նա Բօրչալուի գաւառը, Երևանի նահանգը և ուրիշ երկրներ, որպէս զի այդ կողմերում զարգացնէր բամբակի, շաքարեղէնի, լեղակի և դահլիճի մշակութիւնը, գործարաններ բաց անել տար և իր հայրենիքը տնտեսապէս կենդանացնէր:

Այդ բոլոր շարժումներին զարկ էր տալիս Յովսէփ արք-եպիսկոպոսը:

Ռուսաց կառավարութեան այն ժամանակվայ բաղադրական չափերը պահանջում էին, որ պետութեան արեւելեան սահմանները պարսից և օսմանց յարկաւորմաներից ազատ պահելու համար, որպէս մի ամուր պատնէշ, վերականգնեցնէին հայ-վրաց միացեալ իշխանութիւնը, որը, Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ, խոստանում էր հաւատարմ առանձնապա՛շ լինել: Արեւելեան մահմեդականութիւնը, մասնաւոր Աղբիւրկիսի մահմեդականները միշտ մեծ վտանգ էին սպառնում Ռուսաստանին: Հարկաւոր էր մի միջնապարիսպ

նրանց կատաղի հոռոմքի առաջն առնելու համար, և այդ միջնապարիսպը պէտք է լինէին քրիստոնէայ հայերը և վրացիները:

Գեո. 1783 թ. ապրիլի 6-ին իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչ Պետեմկինը, որը հրապարակած էր անկախ Հայաստանի իշխանութեան գլուխը անցնելու բաղձանքով, հրամանարեց նոյն ժամանակվայ կովկասեան զօրքերի գլխաւոր հրամանատար գեներալ պորուչիկ Պաւել Սկրեբէլ Պետեմկինին, որ նա իշխանութիւնից հեռացնէ Շուշիի իւրաքանչիւր իշխանին, օրին հայոց մէջները, հաստատելու համար Գարաբաղում հայոց անկախ իշխանութիւն: Մի և նոյն բովանդակութեամբ հրաման կրկնվեցաւ 1783 թ. մայիսի 10-ին, մի և նոյն գեներալ-պորուչիկ Պետեմկինին, որ հայերին յուսադրէ, որպէս զի նրանք գործակցին ռուսաց կառավարութեան նպատակներին, որը դիտաւորութիւն ունի կաղմբու, նրանցից մի գործը քրիստոնէայ պետութիւն, Ռուսաստանի բարձրագոյն հովանաւորութեան ներքոյ: Եւ միայնակ ինչի դաւ:

Այդ բոլորը վառէին Գարաբաղի մէջները, այդ բոլորը յայտնի էր Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսին, որը մէջները խորհրդակցեցն էր, այդ բոլորը յայտնի էր և Էջմիածնի կաթողիկոսին, որը դադանի մասնակցում էր ընդհանուր գործին: Գարաբաղի մէջները խոտանում էին մատակարարել ռուսաց զօրքերի բոլոր պաշարները և այլ պիտուքները, երբ նրանք իրանց կողմը կը գային, — խոտանում էին իրանց ուժերով միանալ ռուսաց զօրքերի հետ: Պատերազմը նշանակված էր 1784 թվի ամառը, գեներալ պորուչիկ Պետեմկինը պատրաստված էր պարսիկների դէմ պատերազմ գնալու: Այդ ժամանակ Գարաբաղի մէջները կողմից Ստեփան Դաւթեան անունով մի պատուիրակ գնաց գնաւ պոր. Պետեմկինի մօտ, հայոց պատրաստութիւնների և Աղբիւրկիսի քաղաքական դրութեան մասին նրան մանրամասն տեղեկութիւններ հաղորդելու: Այդ Ստեփան Դաւթեանը իր արժանաւոր ծառայութեան համար վարձատրվեցաւ պրէմիեր-մայորի աստիճանով:

(Ըր չարունակվի)

Հասարակ թշնամար է վերաբերում իշխան Բիսմարկին և շատ ուրախ կը լինէր, եթէ կառավարչական իշխանութիւնը նրանից մի ուրիշ մարդու ձեռքն անցնէր: Այդ բանը շատ լաւ հասկանում է իշխան Բիսմարկը և վերաբերում է այդ կուսակցութեանը իբրեւ մի թշնամու, որի հետ հաշտվելու մասին մտածելն անգամ աւելորդ է: Երկաթէ կանցքերը այժմ ստիպւած է մաքաւել մի դժուար գործիւեան դէմ, որ ինքն է ստեղծել:

ՆԱԽԱԿ ԹԻՒՐԻՍՏՅՈՒՆ

Վան, 11/23 մայիս 1882

Գուցէ Հայաստանը աւելի անձանթ աշխարհ է հեռաւանակ հայերուն քան թէ թաթարներուն և ջուրհաններուն բնակած աշխարհները: Նոյն իսկ Կ. Պոլսի հայը որ Հայաստանի քաղաքական և կրթական գործերու ղեկի իւր ձեռքը բռնած է, աւելի լաւ կը ճանէ Գրաւստան քան թէ իւր կառավարելու ուղիւ Հայաստանը: Արդեօք ազգային վարչութեան և կրթութեան ընկերութիւններուն մէջ քանի խելահաս անձ կը գտնուի որ Հայաստան աշխարհը տեսած, կամ ղեկ մտնող վիճակը, գործիւնը և պահանջները լաւ ուսումնասիրած լինին: Մեր Կ. Պոլսեցի հայը վիճակորէ Զիւլթիի թշուառն եւ իւր կարգաւոր և սերտելով, Գարիբի կոչանքներն անգամ լաւ ուսումնասիրած է. բայց Գարիբի այդ ստորերկրից անմաքորթեանց ճանապարհներուն շնորհիւ կը զարթոյնայ վրայ զարթոյնած ժամանակ ինքզինը չը գիտէր որ Հայաստանի փառքին եղող Վանի և իւր Արեւմտեանի մէջ կրակ չը կայ բնաւ, այլ ապականութիւններ կը դիւլոսն կը մնան արտաքիններուն մէջ ձմեռներն և դարձեալ կը գործածեն պարսկերէնու պարսկաւորութեան համար: Թէ այդ տեսակ անմաքորթեաներու կոյտեր օրը տալաններով, սրտի հիւանդութեանց պատճառ կը լինին, ինքնին հասկանալի է: Հայաստանի նկատմամբ այս ընդհանուր ազդեցութիւնը յատուկ եկած է, ոչ միայն հայաստանցիներուն գիրքը ծանօթացնելու կերպերը չը գիտնալէն, որ տղետ ժողովրդաց յատկութիւնն է, այլ և Կ. պոլսեցի որը Հայաստանը կառավարել կուզեն, այս մասին ունեցած անհզօրութենէն և անտարբերութենէն: Միթէ հարկաւոր չէ որ յատուկ մարդեր ուղարկեն, կամ արդէն Հայաստան գտնուած պաշտօնական անձանց յատուկ հրահանգներ տան որ մանրամասն տեղեկութիւններ հաղորդեն Հայաստանի զիրքին, առևտրական վիճակին, արտադրութեանց և ներածութեանց, ժողովրդեան թուոյն, անտեսական, ընտանեկան կացութեան, վարույն, բարոյ, սովորութիւններուն և այլն վրայ:

Եթէ Հայաստանի մէջ գտնուած մի քանի վարժապետներ օրը առատօքն մինչ երկուց վարժապետին մէջ վարժուած ժամանակ կանգնուին աշակերտներուն հետ, իրենց կեանքի այդ սահմանափակ նեղ շրջանակէն երբեքն չը դուրս գան, չը գրեն (որը բնականապէս տեղական ուսումնարաններու վերաբերելով կը լինին մեծ մասով), ոչինչ որից տեղեկութիւն կըն ստանաւ Կ. պոլսեցիք: Հայաստանի գործիւն միայն, բայց մի քանի լաւ կանգնուած գրած հարաւորապէս լաւագոյն:

Սղոյութները յատկապէս մարդիկ հանած են այս կողմեր որոյ պաշտօնը կը թի առ այժմ ուսումնասիրել երկիրն և տեղեկագիրներ զրկել որպէս զի յետոյ այդ տեղեկագիրք համեմատ գործի միայն Վանի մէջ այդ գործին աշխատողները բուն եղովնայ միաբանութենէն չեն, այլ գովաբանական կարգէն երկու կրօնաւորներ մին ժառ Ռէթօրէ, 45—50 տարեկան որ աւելի խորամանկ և վտանգաւոր կը լինի, միւսն՝ Կիւպլան անուն երիտասարդ մէկ դուրձաբար և վիճաբանաւոր: Սղոյ Սղոյեցի անցնելով Վան եկած ժամանակ, Սղոյի հայերը որը բոլորովին երեսի վրայ ձգուած և անպաշտպան ժողովուրդ մ'են մինչև անգամ հայերէն խօսել չը գիտեն այլ արաբերէն կը խօսին, այդ կրօնաւորաց խոստումներն և եւրոպական տարաբնակներն չլացած, խոսողներն են իրենց քղանցներուն տակ ժամելով պաշտպան դառնալ: Կովստիկանները այս մասին տեղեկացուած լինելով իրենց մեծաւորին, կերել թէ յայտն պատասխան առած են: Հ. Ռէթօրէ այսօր կը մեկնի Վանէն դէպի Սղոյ, այնտեղի հայ ժողովուրդը պատկանաւորութեան գերինը դարձունելու համար, մինչդեռ պատրիարքարանը ու-

նից տեղեկութիւն չունի գուցէ այս դարձուածներէ և ոչ իսկ Սղոյի հայոց վիճակէն: Եթէ Ժողովուրդ մէջ, մեր թագաւորութիւն ունեցած ժամանակ, Արիւսեան տակին վրայ արին և նորա կրթանման պատճառ եղան այդ Գովստիկանները, հաւատարմութեան (ինկիլիպիտի) այդ ստակալի քաղաքականները արեւոք ինչքը չը պիտի անեն այժմ անտերունջ Հայաստանին, երբ կաշխատեն իրենց բնակը դնել նորա ամենէն հեռաւոր խորհրդի անդամ որը պատրիարքարանի անձանթ մնալով, անտեր և անօգնական կը տառապին, իրենց ազգայնութիւնը բոլորովին կորսնցունելու վտանգին ենթարկուած:

Բայց եղովնները և նոյա պաշտօնակց Գովստիկանները, Գովստիկանները և այլն դատապարտել աւելի մեր կրօնաւորները և զմեզ պէտք է որ դատապարտենք զի նոյա իրենց կոչման համեմատ կը գործեն, իսկ մերկները ինչ կանեն, իրենց գնացած տեղեր խառնութիւններ ձգելէն և մասնութիւններ անելէն զատ ժամանակ կը գտնեն որ ուրիշ գործերով զբաղին, ժողովրդի պէտքերը հոգան, օգնեն և պաշտպանեն անոր: Բայց մեզ ալ աւելի դարմանալի չէր որ մեր այդ տեսակ կրօնաւորներուն տակին յարդ ու պատիւ կը տանք: Սրտանձնուած զարկուն վարդապետ մ'ունինք որ Կիւբուքէրը աւելի ի վրայ աւելի իւր ազգը մասնէց և Նաճարեանց Գիւլիպետու և Կիւբուքէրի պէս ազգայնէ մէկը կառավարութեան ձեռքով այնտեղէն քսուրել տուած, յետոյ ինք ալ վտանգեցաւ ժողովուրդէն: Եկաւ Վան ուր Սղոյեան, Միացեալ ընկերութեանց պաշտօնակցները կառավարութեան մասնէց, վերջապէս ժողովուրդը սատակ յուզուեցաւ, գնացին իր տունը քարկոնցին «անկէյն Գարեգին» պօռալով, պատրիարքարան բողոքներ թափեցան և Գարեգին Վանէն ալ վտանգուելով դնաց Բաղէ, ուր ժողովուրդի ճնշուած մասը սորա անխնամութեան պատճառաւ բոլորովին յուսահատուած, անկողի կան եկեղեցւոյն յարեցաւ: Այնտեղ ալ գնաց Մուշ Եր, կը լսենք այժմ թէ, իւր պատճառով մեծ խռովութիւն եղնելով, հարկ տեսեր է դիշերայն փախչել երթալ Աւելի դարմանալին և ծիծաղելին այն է որ «Մուսիս» լրագրին մէջ կարդայինք «Մեզու Հայաստանէն» արտատպուած մի լուր որ իւր թէ այս բարեփոխի վարդապետ թիֆլիսցիներն ալ հոտուել Ռաբլով, իրենց առաջնորդ պիտի անեն երբեք...: Բարի վայելու՛մ, թող նոյա ալ Գարեգինի համէն ու հոտը իմանան, բայց յետոյ զղջացած ժամանակ թող չստեն թէ Տաճկաստանէն անպիտան կղերականները կուղարկեն մեզ միշտ, ահա թիֆլիսցիներն իրենց կուզեն և ոչ թէ իրենց կուղարկուի: Մենք այդ տխուր ռուպլին կը ստիպուինք յիշեցունել իրենց, «Մշակի» մէջ հրատարակուած այս փորձառական նամակը: Մեզ աւելի հաւանական կը լինի մտածել թէ «Մեզուն» Բիթլիս գրելու տեղ սխալմանը Թիֆլիս գրած լինի, ինչպէս որ Միջազգային փոստն ալ Շվեյցարիայէն (Նեշապէ) Թիֆլիս մի հայ վարդապետի անունով զրկուած Լ'Education Մանկավարժական թերթի հասցէն միշտ սխալ կարդալով, Վան կը բերէ զայն, Բիթլիս զրգարելու համար, և Վանի փոստն կը մնան այդ թիֆլիսի այս տարին յունվարէն սկսած: Գարեգին Սրտանձնուածներ իւր Թիֆլիսի առաջնորդ կանգնուածութեան լուր մասին ուրիշ կերպ մեկնութիւն չեմ կարող տալ, եթէ ոչ շատ տխուր զարգացար պէտք է ունենալ Թիֆլիսի հայոց մտածմանց մասին: Իրաւ է թէ Գարեգին վարդապետ անուն ունեցած է ժողովրդական մի քանի վեպերն զրի առնելով հրատարակելուն համար, բայց այդպիսի կը քաւ արեւոք ժողովրդեան մը կրօնական, մտաւորական և քաղաքական գործերը կառավարել կրնալու և իւր լաւ եկեղեցական աւանդ ունենալու համար: Գրեւթ Թիֆլիսի հայոց համակրութիւնը կարելի է այսչափ ածան դնուի: Չենք կարծիք:

Հրաման

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Իրանական գործերի նոր քարտուղարը, Տրամիլիան, յայտնեց, որ ներկայ տարւոյ առաջին չորս ամիսներու իրանիկացի կառավարած յանցանքների թիւը 1800-ից աւելի է: Այս ամսու կառավարած յանցանքների թիւը նախընթաց ամիսներից իւրաքանչիւրում կառավարած յանցանքների միջին թիւը պակաս է: Հոգային յանցանքները այս տարի սատակ չառաջան, չը նայելով աղ-

բատ ֆէրմէններին արած դիմումին և այն ճնշող միջոցներին, որ գործ էր դնում կառավարութիւնը օրէնքի դէմ գործող յանցանքների դէմ:

— Կ. Պոլսի «Times» լրագրին հաղորդում են, որ Արիւս կղզու ազգային ժողովը Բ. Կրանը երկու խնդրագիր ներկայացրեց, մէկ խնդրագիրը, որ ստորագրել են քրիստոնեայ պատգամաւորները, պահանջում է վարչական խորհրդի վերանորոգութիւնը և տեղական այլ թէֆօրմներ: Միւսը, որ մասնաւորապէս պատգամաւորներ են ստորագրել, ընդգրկում է քրիստոնեաների պահանջած վերանորոգութիւնների դէմ և ասում է, որ այդ թէֆօրմները միայն մէկ նպատակ ունեն, այն է, Արիւս կղզին մէկ հարկատու նահանգ դարձնել, վերջը Յունաստանի հետ միացնելու համար:

— «Daily News» լրագրին վիշնայեց հեռագրում են մայիսի 15-ից, որ Բրիտիում հրեայ գաղթականների թիւը արդէն 15,000-ի է հասել: Լվովի քրեական դատարանը զանազան ժամանակով բանտարկութեան դատապարտեց հինգ դիւղաղներին, որոնք Զատիկի երկուշաբթի օրը Բաղովիցում հրեաների դէմ արած բռնութիւններին մասնակցել էին:

— Թէհրանից հաղորդում են, որ պարսկական կառավարութիւնը չարունակում է բարեփոխական յարաբերութիւններ պահպանել Աւստրո-Ռուսալիայի հետ: Աւստրիական ինք օֆիցերներ ներկայ թաղում ծառայում են որպէս մարդիկ պարսկական զօրքի զանազան մասներում:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Աշխարհիս ամեն ամեն լրագրիւր: Այդպիսի լրագիր համարվում է ամերիկական «New-York-Herald» հրատարակութիւնը: Այդ լրագրի այս տարւոյ մարտի 12-ի համարը 28 երեսից է բաղկացած կամ 168 սիւններից (երեսում 6 սիւն կա): 107 սիւնակներ միայն յայտարարութիւններն ունեն բռնած, որոնց թիւը այս համարում 4000-ի է հասնում: Այդ աճանքի հրատարակութեան մէկ համարը չարուն համար պահանջում են 120 դրաշմներ, որոնց ձեռքով անցնում են 5-ից մինչև 6 միլիոն տաւեր: «New-York-Herald» լրագիրը իւրաքանչիւր օր տպւում է 150,000 օրինակ, բայց երբեքն համարների թիւը սատակ մեծանում է: Այդպէս, օրինակ, 1880 թիւի նոյեմբերի 3-ից, նախադրեց Գարֆիլդին ընտրելու ժամանակ, 202,500 օրինակ տպվեցաւ, և աւելի շատ կը տպվէր եթէ տպարանը կարողանար աւելի պարտատէր: Իւրաքանչիւր համարի համար պահանջվում է 2,200 ստոպ թուղթ:

Ուսանողական յուզմունքն էր Գարիբիի վրայ: Գարիբի լրագիրները խօսեցին, Լատինական թաղի մէջ յուզմունքը շարունակվում է և ծանր կերպարանք է ստանալ: Բանը նրանումն է, որ վերջին ժամանակներում Գարիբիում բազմաթիւ այդպէս անուանված Souteneurs, — հովանաւորներ կամ, աւելի լաւ ասած, անբարոյական կանանց հաշիւով ապրողները: Այդ մարդիկ այժմեան Գարիբի իտական արտաքին կազմում, և որովհետեւ պոլիցիան անդօր է այդ չարիքի դէմ մի բան անել, այդ պատճառով ուսանողների մէջ միտք ծնվեցաւ գոյն Սենայի ձախ աղբ մաքրել այդպիսի մարդկերանցից: Մայիսի 15-ին, կէսօրից յետոյ 3 ժամին, Լիւիսմբուրգեան այգիում մօտ երեք հարիւր ուսանողներ ժողովեցան: Տեսնելով հինգ թէ վեց անձնաւորութիւնների, որոնց ուսանողները «Տովանաւորներ» համարեցին, ուսանողները ըստ կանցնի հաւանք նրանց «A bas les souteneurs!» (Կորչիւն պոռնիկների վերակացունքը) աղաղակներով: Կարկածելի անձնաւորութիւնները փախչում էին, բայց նրանցից մէկը բողոքեց իրան այդպիսի աւանդ տալով դէմ, այն ժամանակ երիտասարդ մարդիկ բռնեցին նրան և առաջինի մէջ գցեցին: Մէկ պարոն, որ դրօսնում էր այգիում և վախեցած անձնաւորութեան ազդեղանքներ լսելով, ընկաւ ջրի մէջ օգնելու նրան առաջնից դուրս գալու համար: Այն ժամանակ երիտասարդ մարդիկ իրանց բարկութիւնը թափեցին այդ օգնողի վրա, որը խոհանարին համարեց չուտով այգիից: Հեռանալ: Գրանցից յետոյ ուսանողների յուզմունքը ճանդարտվեց, բայց ոչ գիշերով այդ յուզմունքը կրկին սկսվեցաւ Սեն-Միշել և Սեն-Ջեյմէն բուլվարների վրա: Երիտասարդ Պիշար (Լիւիսմբուրգեան առաջնում ակաւայ լողացող մարդը), փոխելով իր թաց չորերը, և սատակ կատարած լինելով իրան վերաբողոքների դէմ, վերադառնալ թաղի բողոք փառքները վազվեցեց որոնելով իր թշնամիներին:

Տեսնելով իրան ջուրը գցողները մէկին, նա մատնեց նրան պոլիցիականին: Պոլիցիական գործաւորները երկուսին ևս հրակրեց իր հետ ոստիկանատուն գնալ, բայց այդ ժամանակ հարեան հիւանդներից դուրս եկաւ ուսանողների մէկ անաղին բազմութիւն, որոնք ոչ թէ միայն աղաւթներ իրանց ընկերոջը, բայց և պոլիցիականին ծեծեցին: Վերջինս օգնութեան հասան մի քանի պոլիցիականներ, այդ ժամանակ կատարեալ պատերազմ սկսվեցաւ, որի արդաւարտով երկու ուսանողներ կաշնաւորվեցան: Այդ բանը երիտասարդ մարդկանց համարութեան բաժանը լրաց: Շուտով ամբողջ թաղը սողել վրա էր: Երկու հազար ուսանողներ հաւաքվեցան Օրէօնեան կից ճանապարհների ոստիկանատան առջև, ուր ոստիկանապետը քննութեան էր ենթարկում կաշնաւորված ուսանողներին: Արեւոյս պահանջում էր ազատել ուսանողներին: Կոմսարը հրաւիրում էր երիտասարդ մարդկանց հեռանալ: Ամբողջ հազմագլխեալ, բայց դնաց Սուֆիօ անուանով փողոցը, ուր կանգնած էր պոլիցիականներ մէկ բաժինը Պանտօֆօնեան պօստը պահանջելու համար: Այստեղ ուսանողները կրկին վերաւորեցին պոլիցիականներին և ուսանողներից մի քանիսները նորից կաշնաւորվեցան: Մէկ պոլիցիական, բոթելով մէկ ուսանողին, այնպիսի անպատկ կերպ, որ երեսը արիւնաթաթախ եղաւ: Վերջապէս, հարսիւ պահեստի հեծեւազօրքի միջամտութեան, ամբողջ կարելի եղաւ ցրվել: Կաշնաւորված 19 ուսանողներին տարան պոլիցիական կոմիտայի մօտ, վեց ուսանողներ արձակվեցան, 13 ուսանողներ բարտարվեցան և դատի կենթարկվեցան: Միւս օրը, կէսօրին, ուսանողների խմբեր, նոյնպէս և լրցելիստներ, գնացին Լիւքսեմբուրգեան այգին «պոռնիկաներ» պահողներին: Հաշվեցուց դիտաւորութեամբ: Մի քանի անձանց վերաւորեցին, կրկին աղաղակ և չիփ ընկաւ: Կէսօրից 5 ժամին քսան ժանդարմներից բաղկացած մէկ բաժին պէտք է մաքրէր այգին: Երեկոյն բաւական ճանդարտ անցաւ, բայց աւելի ուշ, Բիւլիէ այգիի մօտ, կրկին հաւաքվեցան ուսանողների խմբեր, որոնք նորոգեցին իրանց ցոյցերը Սեն-Միշել փողոցի վրա: Այստեղ կրկին կուս ծագեց նրանց և պոլիցիականների մէջ: Պոլիցիականներից մէկը գլխին փայտի այնպիսի մի հարուած տալուց, որ ուշաթափ ընկաւ դետի վրա: Կատարեալ կուս սկսվեցաւ: Ուսանողները տեսնելով, որ գործը զանազան է ստանում, ցրվեցան և գնացին վառանալ հիւրանոցներ: Նրանցից շատերը վերաւորվեցան: Այդ օրը տասն և ութ ուսանողներ կաշնաւորվեցան:

ՄԵԾԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 յունիս: «Правит. Вѣстн.» լրագրում գտնուեցաւ է Բարձրագոյն հաստատված կանոնադրութիւնը դիւղական կալուածական բանկերի մասին: Այդ կանոնադրութիւնը չէ տարածվում Սիբիրի, Ալեքսիսկայի, Լեհաստանի, Թագաւորութեան և Բալտեան նահանգներէ վրա:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՒՄ, 1 յունիս: Տեղացիները մեծ անկարգութիւններ կատարեցին, սպանված և վիրաւորված են 129 եւրօպացիներ, ծանր կերպով վիրաւորված է անգլիական հիւպատոսը: Գերվիշ-փաշա Կայրէից Ալէքսանդրիա գնաց: Ամբողջ երկրում մեծ յուզմունք է տիրում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 մայիս: Պետական բանկի 5% տոմսեր առաջին շրջանի արժէ 94 ռ. 25 Կ., երկրորդ 90 ռ. 62 Կ., երրորդ 90 ռ. 62 1/2 Կ., չորրորդ 90 ռ. 62 Կ., հինգերորդ 90 ռ. 25 1/2 Կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսեր արժէ 217 ռ. 50 Կ., երկրորդ 210 ռ. 75 Կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսեր արժէ 89 ռ. 75 1/2 Կ., երկրորդ 89 ռ. 62 Կ., երրորդ 90 ռ. 87 Կ., ոսկի 8 ռ. 7 Կ.: Ռուսաց 1 ռ. 1 ծնդօնի փրա արժէ 24,47 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 208 մարկ 50 պֆ., Գարիբի վրա արժէ 256 ֆրանկ: Բորսայի արամադրութիւնը ամբողջ է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԿՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

